

Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող Ալավերդի, Օձուն, Հաղպատ, Աքորի, Հազվի, Ախթալա համայնքներին ՀՀ պետական բյուջեի կողմից տրամադրվող սուբվենցիաների վերաբերյալ

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքի համաձայն Ալավերդու պղնձաձուլական գործարանի և Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատի կողմից վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին պետական բյուջեից կատարվում են մասնահանումներ՝ բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար: Մարզպետարանն ամենայն աջակցում է մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկի մեջ ընդգրկված համայնքներին բնապահպանական ու առողջապահական ծրագրերի կազմման և ՀՀ լիազոր մարմինների հաստատմանը ներկայացնելու գործընթացում:

ՀՀ պետական բյուջեի կողմից 2011-2014թթ. բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար Լոռու մարզի համայնքներին տրամադրված գումարների վերաբերյալ տվյալները հետևյալն են.

հազ. դրամ

Համայնքներ	Տարիները			
	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Ալավերդի	55 155.9	94 411.5	110 000.0	120 000.0
Հաղպատ	18 600.0	23 602.8	25 000.0	27 000.0
Օձուն	18 600.0	23 602.9	58 664.8	12 498.4
Աքորի	11 712.0	23 602.8	28 000.0	30 000.0
Հազվի	800.0	8 000.0	50 000.0	30 000.0
Ախթալա	1 000.0	1 500.0	3 500.0	4 500.0
Ընդամենը	113 067.9	174 720.0	275 164.8	223 998.4

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին 2015թ. համար նախատեսվում է.

- Ալավերդի համայնքին - 94 677.0 հազ. դրամ;
- Օձուն համայնքին - 7 511.4 հազ. դրամ;
- Հաղպատ համայնքին - 27 470.6 հազ. դրամ;
- Աքորի համայնքին - 20862.2 հազ. դրամ;
- Հազվի համայնքին - ----- հազ. դրամ;
- Ախթալա համայնքին - ----- հազ. դրամ:

Ելնելով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով ընձեռնված հնարավորությունից, միջնորդություն է ներկայացվել ՀՀ բնապահպանության նախարարություն, որպեսզի Լոռու մարզի Ստեփանավան և Ուրասար համայնքները («Սազամար» ՓԲԸ՝ շահագործում է Արմանիսի ոսկու-բազմամետաղային հանքավայրը) նույնպես ընդգրկվեն վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկում ու բնապահպանական ծրագրեր իրականացնելու համար պետական բյուջեից սահմանված կարգով ստանան մասնահանումներ:

Ակնկալվող բնապահպանական նպատակային գումարները էապես կնպաստեն նշված համայնքների ազգաբնակչության առողջության և շրջակա միջավայրի պահպանման գործում:

- Ինչպես հայտնի է շրջակա միջավայրի և գյուղատնտեսության վրա բացասաբար են ազդում հանքահարստացումից առաջացող պոչանքները, որոնք բացի ծանր մետաղներից պարունակում են նաև տարբեր քիմիական ռեագենտներ: Լոռու մարզում առկա են 7 պոչամբարներ, որոնք հիմնականում գտնվում են Ախթալա, Մեծ Այրում, Կողես համայնքների վարչական տարածքներում և անշուշտ իրենց բացասական ազդեցությունն են թողնում հարակից տարածքների վրա:

Առաջարկվել է մասնագիտացված կազմակերպությունների միջոցով ճշտել ջրային էռոզիայի ու հողմնահարման միջոցով պոչամբարներից դեպի հարակից հողամասերը ներթափանցող միացությունների ազդեցությունները ու սահմանները և տվյալ հողատերերին՝ որպես վնասի հատուցում, հասցեական նույնպես ընդգրկել ընկերությունների գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվողների ցանկում:

- ՀՀ պետական բյուջեի կողմից ստացվող գումարների հաշվին արտադրություններից առավել վնասակար ազդեցության ենթարկվող համայնքները իրականացնելով բնապահպանական և առողջապահական ծրագրեր, հաճախ գումարի սղության պատճառով չեն կարողանում իրականացնել առավել մեծ նշանակություն ունեցող ծրագրեր: Համայնքային բնապահպանական ծրագրերի գումարները առնվազն կրկնապատկելու համար առաջարկվել է, որպեսզի ՀՀ բնապահպանության նախարարությունը այլ շահագրգիռ կառույցների հետ համատեղ օգնեն բնապահպանական մասնահամումներ ստացող համայնքներին իրենց ծրագրերը ընդլայնված բյուջեով և պահանջվող չափանիշներով ներկայացնեն միջազգային դոնոր կազմակերպություններին: Ելնելով միջազգային կազմակերպությունների ծրագրային պահանջներից, համայնքները կարող են ՀՀ պետական բյուջեից ստացվող բնապահպանական գումարները որպես համաֆինանսավորում ներկայացնել դոնորներին, որով էապես կավելանան համայնքներին ուղղված բնապահպանական ծրագրերի իրականացման գումարները:

ՀՀ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի մեջ առաջարկված փոփոխությունները միանշանակորեն կնպաստեն ՏԻՄ-երի ինստիտուտի զարգացմանը և կբարձրացնեն տեղական ինքնակառավարման մարմինների դերը օգտակար հանածոների արդյունահանման, թափոնների տեղադրման ու արտանետումների վերահսկման գործընթացներին:

Մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին բնապահպանական ծրագրերի բնապահպանական մասի կազմման ժամանակ առաջարկվել է հաշվի առնել և ծրագրերում ներառել հետևյալ բնապահպանական ճյուղերը.

- աղբահանության կազմակերպում և ընդհանուր սանիտարահամաճարակային իրավիճակի բարելավումն ապահովող աշխատանքների իրականացում
- համայնքի վարչական տարածքի սահմաններում չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացում

- մթնոլորտային օդի աղտոտվածության կանխմանն ուղղված միջոցառումների իրականացում
- ջրային ռեսուրսների պահպանություն
- թափոնների գործածության (հավաքում, փոխադրում, պահում, մշակում, վերամշակում, օգտահանում, հեռացում, վնասազերծում, ոչնչացում և թաղում) ոլորտում ծրագրերի կազմում և դրանց իրականացմանն աջակցություն:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն պետական բյուջեյից վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին մասնահանվող գումարները մեծապես օգնում են համայնքներին բնապահպանական և առողջապահական իրավիճակը բարելավելու գործում:

2014թ. բնապահպանական սուբվենցիա ստացող համայնքների ծրագրերը տեղադրված են սույն էլեկտրոնային էջում: